



35893





Արտահանման Հայոց Թեմական Խորհրդի կողմից յաճախարհում է  
այս ձեռնարկը գործածել ազգային դպրոցներում

## ՈՒՂՂԵԳՐԱԿԱՆ ՅՈՒՒԾՆԵՐ

35-ը թ 99

# ԳԱՅԼԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

ԿԱԶՄԵՑ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ

ԱԻՕ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱ  
1960  
ՆՈՐ - ԶՈՒՆԱ

Հրատարակեցին եւ բառացուցակները կազմեցին  
Յովակ Ստեփանին եւ Խաչատուր Գրիգորեան

Օ

Թ.Ա.Խ.Բ.Հ.

Արտ. Հայոց Թեմական Տպարան  
1926

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս «Ռողագրական յօդւածների» առաջին մասի նիւթը քաղւած է Բըհմի կենդանաբանութիւնից, իսկ երկրորդ մասը ժողովրդական առակներ են՝ Վարդանայ առակներից, Հայկունու ժողովածուից և այլ աղբիւճներից. մասամբ և անմիջապէս ժողովրդի բերանից զրի առնւած։

Գրւածքը մի ամբողջութիւն է կազմում և պատրաստած է յատկապէս Ա. և Յ. դասարանների համար, բայց կարող է ծառայել և իրեն ընթերցանութեան նիւթ։

Մ. Աբեղեան

## Ա. ՄԱՍ

### ԳԱՅԼ

1. ԳԱՅԼԻ ԱՐՑԱՔԻՆՔ. — Գայլը շան նախնական տեսակն է. նա իւր կազմածքով շատ քիչ է տարրերում ոչխարի շներից. մի փոքր աւելի մեծ է, երկայն ոտներով և վիտ, նա իւր բաւանագ ազին միշտ կախ ձգած ունի, մինչդեռ շունը սովորաբար դէպի վեր ոլորած է պահում։ Գայլի մազերը հիւսիսային երկիրներում թաւ են և երկայն, իսկ հարաւային ցերմ աշխարհներում նուր և կարճ, Մորթու գոյնը սիախառն գորշ է, ամառն աւելի կարմրաւոն, ձմեռը՝ գեղնաւուն։ Պատահում են և ու գայլեր։ Լեռնային գայլերն ընդհանրապէս մեծ և ոժեղ են, իսկ գաշտայինները համեմատաբար փոքր և թոյլ, բայց ոչ պակաս զիշտիչ և յանդուգի։

2. ԳԱՅԼԻ ՏԱՐԱԾԻԱԾ ԼԻՆԵԼՔ. — Գայլերը դեռ խիստ տարածւած են աշխարհի համարեա բոլոր մասերում։ Բայց որովհետեւ թշնամի են ընտանի կենդանիներին և մեծամեծ վիասներ են հասցնում. մարդկի վազուց արդէն եռանդուն կերպով սկսել են ոչնչացնել այս զիշտիչ զազաններին, և այս մասին վառովն ու գնդակը շատ բան են տեսել. Բոլորովին ջնջւել, վերջացել են Զւիցերիալի շատ կողմերից, Գերմանիայի միջին և հիւսիսային մասերից, Մեծ Բրիտանիայից, Բելգիայից, Հոլլանդիայից և Դանիմարքից։ Եւ առաջայում ամենից շատ կան այժմ Խուսաստանի միջին և Բարպային մասերում, Մեր կողմերում ևս շատ զայլեր հարաւային մասերում, Մեր կողմերում ևս շատ զայլեր կան, և առանձին հոգ չի տարւում այս զիշտիչները կռարելու համար։

3. ԳԱՅԼԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՆ ՈՒ ԹԱՓԱՍԽԵԼԸ: — Գայլն ապրում է անդուռ և ամայի տեղերում, մութ խորշերում, յատկապէս խիտ և անթափանց անտառներում, լիոնների խոռոչներում, մագառուներում, եղեգնուներում և նոյն իսկ նահիներում: Դաշտավայրերում յաճախ նա ինքն է իւր համար բոյն փորում: Երբեմն բնակալում է մինչև անգամ արտերում և շատ մօտիկ մարդկանց բնակութեան տեղերին, ըստ մօտիկ մարդկանց բնակութեան տեղերին, բայց ամեն կերպ աշխատում է մարդու աշքի չերեալ:

Մարդաբնակ տեղերում գայլը օակաւադէպ մութն ընկնելուց առաջ կերևայ, իսկ ամայի տեղերում ընդհակառակ ճաշից յետոյ արդէն սկսում է իւր գործունէութիւնը: ուակը ճաշից յետոյ արդէն սկսում է իւր գործունէութիւնը: Պատկաները օրինը առաւտաից իրիկուն էլ նա ման է գայլս որթուղար առած է դարձել թէ՝ «Գայլն ամպ օրսի. զրա համար առած է դարձել թէ՝ «Գայլն ամպ օրսից, զողը՝ մութ գիշեր»:

Տարւայ մէջ բիշ անգամ նա երկար ժամանակով մի- և նոյն տեղում է մնում: սովորաբար թափառում է դէս ու մեռում է մնում: օրինը, շաբաթներով թողնում է իւր բոյնը, բայց պէս: օրերով, շաբաթներով թողնում է իւր բոյնը, իւր յետոյ վերադանում է իւր հին տեղը և ապա դարձեալ ձգում, ուրիշ տեղ է գնում:

4. ԳԱՅԼԵՐԻ ՎՈՀՄԱԿԱՆԵՐԸ: — Գարնանն ու ամառը գտի լերն ապրում են մենակ, երկ-երկու, երեք-երեք, աշնանն ընտանիքով, ձմեռը՝ վահմախներով, որոնց մէջ ործ գայլերը թւով աւելի շատ են լինում, քան էգերը: Խմբական կեանքով ապրելիս ամեն բան ընկերութեամբ են անում: միմեանց պաշտպանում են և հեռաւոր դէպքում ոռնոցով օդնութեան են կանչում: Իւրաքանչիւր խումբ ունենում է իւր առաջնորդը, որի վրայ է ընկնում խմբի ապահովութեան հոգսը: Ձմեռը, երբ ձիւնը գտվիս, նստում է, երբեմն եր- կայն շարքերով ինչպէս զինուորներ՝ հետեւում են իրենց առաջնորդ գօրավարին:

Գայլերն ընկերութեամբ նոյնպէս յաջողութեամբ են գայլերն ընկերութեամբ նոյնպէս յաջողութեամբ:

վարում իրենց թափառական կեանքը, ինչպէս մենակ: Ցանախ յիսնաւոր, հարիւրաւոր մզոններով հեռանուու են իւրենց բնակութեան տեղերից: մի գիշերւայ մէջ հինգ-վեց մզոն ճանապարհ են կարում: ցերեկը թագնուում են որեէ ապահով տեղում: միւս գիշերը կամ դարձեալ շարունակում են իրենց ընթացքը, կամ յետ են դառնուում առաջւայ տեղը: Գարսնը որ բացւում է, վոհմակները ցրում են և զայլերն սկսում են մենակ ապրել:

5. ԳԱՅԼԻ ԱՃԵՌՈՒԹԻՒՆԸ: — Գարնան սկզբներում յղի էզ գայլն առանձնանում է մի ապահով տեղ և բերում է երեքից մինչև ինը, սովորաբար չորսից վեց ձագ: Զագերը բան և մէկ օր կոյր են մնում: սկզբում դանդաղ են գօրանում, զարգանում: յետոյ արագ մեծանում են: Նրանք շան լակուտների նման խաղում, գարճանում են, կանաչ խոտերի ու ծաղիկների մէջ թաւալ են տալիս: Այս պատճուով և գայլը ստացել է ծաղկաթաւալ մտկանունը: Մայրը շատ բներոյշ է վերաբերում զեւի իւր ձագերը: լիզում, մարբում է նրանց: երկար ժամանակ կերակրում է իւր կաթով: ամեն կերպ աշխատում է թագուն պահել նրանց և երբ մի վտանգ է սպառնում, ուրիշ տեղ է տանում: Զագերը մինչև երեք տարեկան հասակը զեռ մեծանում են: Գայլերն ապրում են 12—15 տարի: Բարեբախտաբար նրանց մեծ մասը վաղաժամ կոտորում են քաղցից, շատերն էլ ստեկում են բազմաթիւ հիւանդութիւններից, որոնց ենթակայ են բնդանիքապէս բոլոր շների հետ և գայլերը:

6. ԳԱՅԼԻ ՍՆՈՒՆԳԸ: — Ա) մի կենդանի այնքան շարժողութեան մէջ չի գտնուում, որբան գայլը: Ահա այդ է պատճառը, որ նա շատ չոգնում, ուժապառ է լինում: ուստի շատ էլ քաղցածանում է, կարիք է ունենում մեծ շափով կերակրի և ձեռք բերած որսն ապահութեամբ լափում է: Դրանից է առաջացել «գայլի ախորժակ» դաշ-

ւածքը. Այս պատճառով էլ այս գիշատիչը միծամիծ վընասներ է տալիս: Նրա սիրած սրսերն են մեծ ու փոքք ընտանի կենդանիները, թէ չորքոտանիները և թէ թըռչնեղինները, ինչպէս՝ ոչխար, այծ, արջառ, ձի, խոզ, շուն, սագ, բադ, հաւ և այլն: Սիրով ուտում է ամեն ուրիշ կենդանի ես, ինչ որ կարողանում է, նոյն իսկ բոյսեր: Եւ այնքան արինուուց բնաւորութիւն ունի, որ աւելի խեղդում ու պատառում է, բան հարկաւոր է իրեն. ուստի և մի պատուհաս է դառնում խաշնարած ժողովուրդների համար: Ամառը պակաս է վնասում, բան ձմեռը:

Բ) Անտառը մատակարարուում է գայլին աղէս, ողնի, զանազան թռչուններ ու սողուններ, ինչպէս և բուսեղիններ: Երեներին էլ սաստիկ թշնամի է. անխնայ պատառում է եղինիկ, եղջերու, այծեամ և այլն. ոչնչացնում է իւր սահմանի բոլոր նապաստակներն ու նագարեները: Մի խօսքով գայլն ամեն կենդանու վրայ է տալիս, եթէ կարծում է, թէ կը յաղթէ: Քաղցած գայլերի վոհմակները, ատում են, նոյն իսկ արջերի վրայ են յարձակում: Բայց միշտ յաջող որս չի ունենում Ծաղկաթաւալը: Երբեմն երկարժամանակով ստորին տեսակի որսորդութեամբ է գոհանում, — բռնում է մուկ, խլուրդ, առնէս. որսում է մողէսներ (խլէզներ), լորտուններ (անթոյն օձեր), գորտեր և նոյն իսկ զանազան միջատներ, ինչպէս՝ մայիսեան բղէզներ և ուրիշներ: Ախորժակով ուտում է և ամեն տեսակի սատկած գէշեր (լէշեր): Մեծ վնաս է տալիս և բանջարանոցներին ու սեխաստաններին՝ ծակելով և ուտելով ձմերուկ, սեխ, վարունդ (խիար), դղում, գետնախնձոր, եղիպատացորեն և ուրիշ արմտիք:

Գ) Աշնանն և ձմեռն անբնդիատ պտտում է դրսում արածող կենդանիների ետեից և մեծ ու փոքք չի խնայում: Չիերը, տաւարն ու խոզերն անգամ միայն այն ժամանակ

են գայլից ապահով, երբ հոծ ու փակ խմբով են և կամ երբ գայլերը դեռ վոհմակ չեն կազմել: Զմեռը գայլը համար ձակուում է ներս մտնել նոյն իսկ գիւղերն ու քաղաքները, ուր որսում է երբամն շներ, որ նրա սիրելի կերակուրն են: Յաճախ ամառն էլ մտնում է գիւղերը և մի գիշերւայ մէջ բակէ բակ անցնելով՝ բաւական վնասներ է տալիս՝ խեղդելով հորթեր, գառներ ու ոչխարներ: Օգտում է ամեն յարմար դէպքից, աներկիւղազոսկում, մտնում է զոմերը, փարախները, ցատկում է ցանկապատերի վրայով, երդից կամ որե է անցրից ներս է ընկնում և անոգույն վագրի պէս անխնայ կոտարում է բոլոր փոքք կենդանիներին:

Դ) ՄԱՐԴԱԳԱՅԼԻ: — Գայլերի վոհմակները շատ վտանգաւոր են և մարդու համար: Սովորուկ գայլն ինարկէ մինակ էլ յարձակում է մարդու վրայ. բայց մինակ գայլն ընդհանրապէս այնքան վտանգաւոր չէ մարդու համար, ինչպէս նկարագրում է հերիաթների մէջ: Մի թեթև զէնքով, նոյն իսկ մահակով զինւած տղամարդը հազւադէպ զոհ կը գառնայ մի գայլի: Եւ գայլն ինքն էլ միշտ և ամենուրեք զգուշանում է, որքան կարելի է, մարդու հետ յարաբերութիւն ունենալուց:

Դայլի վախը հնուց է գալիս, այն ժամանակներից, երբ անզէն և անպաշտպան խաշնարածների ամբողջ հօները մի գիշերւայ մէջ ոչնչանում էին այս անյագ գաղանի ժանիքներով: Դա սարսափ էր ձգում սենտիապատ մարդկանց վրայ: Այս պատճառով անյիշեատակ ժամանակներից ի վեր մարդիկ ոչ միայն երկիւղով են վերաբերւել դէպի գայլը, այլ և մի տեսակ կրօնական երկիւղածութեամբ. կարծում էին, թէ գայլն օծւած է դիւական յատկութիւններով: Մեր այժմիան ժողովրդական հաւատալիքով գայլը դեռ գեերին ու բաջբերին հաւասար մի ողի է. ուստի ինչպէս ամեն շարունքի, այսինքն չար ոգիների դէմ ուղղ-

ւած կախարդական աղօթքներ կան, այսպէս և գայլի համար կան «գայլակապի աղօթքներ». Գայլի այս հաւատքից առաջացել է և մարդագայլի սնապաշտութիւնը, Մարդագայլ է ամեն գազան, որ գիշերները յարձակում է մարդկանց, մանաւանդ երեխաների վրայ և յափշտակում, ուտում է: Բայց սնանաւատ ժողովուրդը կարծում է, թէ մարդագելը մի սովորական գազան չէ, այլ մի երեակայական գիշատիչ, կէս մարդ, կէս գայլ. իբր թէ դա մի կին է, որ գայլի խորհ հագնելով դայլ է դառնում և այն էլ միայն մարդ ուտում:

8. ԳԱՅԼԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆԸ:— Գայլը որսի միջոցին նոյնպէս խորամանկ, հնարագէտ և յանդուգն է, ինչպէս աղւում: Նա իւր որսին մօտենում է վերին աստիճանի մեծ զգուշութեամբ և որսորդական բոլոր կանոնները պահելով: Անըսունց սողոսկում է հնար եղածին շափ մօտ իւր զոհին, մի ճարպիկ ոստիւնով ցատկում, բոնում է նրա բկից և զետին տապալում. Մերբ գարանամուտ է լինում և համբերութեամբ ձիգ ժամերով սպասում է որսին. Երբեմն էլ աթվելապ ապահովութեամբ հետեւում է որսի հետքերին: Ընկերութեամբ որս անելիս գործում է վոհմակի հետ միաբան: Այդ ժամանակ գայլերի մի մասը որսն է հալածում, միւս մասն էլ աշխատում է նրա առաջը կտրել: Այսպէս շրբաջապատելով շորս բոլորից՝ բոնում հն որսը և իսկոյն պատառում, լափում են: Ոշխարի հօտի հանդիպելիս գայլերի մի մասն աշխատում է շներին հրապութելով հեռացնել, իսկ միւսները յարձակում են ոշխարի վրայ: Որսն անելուց յետոյ գայլը հենց որ գամփուների ձայնը լսում է, տեղից գեր է թռչում, ծլկում. Բայց փախչելիս լաւ ուշք է դարձեր է թռչում, ծլկում. Բայց փախչելիս լաւ ուշք է դարձնում, թէ հետապնդող շներն թանիսն են, և երբ մէկը շատ է հեռանում միւսներից, յանկարծ յետ է դառնում, յարձակում վրան: Նոյնպիսի խարէութեամբ վարւում է ձմեռը

գիւղի մերձակայքում կամ հենց զիւղի մէջ՝ շներին իրենց ապահով զիրքից հանելու համար. Քաղցած գայլը սակայն՝ ամեն խորամանկութիւն և զգուշութիւն մի կողմն է թողնում և ոչ մի բանից չփախենալով՝ ծայրայեղ աստիճանի յանդուգն համարձակութեամբ վրայ է տալիս:

9. ԳԱՅԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԵՒ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ:— Ա) Երբ այս վտանգաւոր զագանը, մանաւանդ վոհմակներով եղած միջոցին, երեսում է, ոչ միայն մարդկանց, այլ և կենդանիների վրայ սարսափ է ձգում. Այդ ժամանակ բոլոր ընտանի կենդանիները, բացի շներից, սկսում են փախչել: Լաւ շներին ընդհակառակն մեծ գլարճութիւն է պատճառում գայլի վրայ յարձակելը: Դժւար հասկանալի է, թէ ինչպէս այս երկու մերձաւոր ցեղակիցների մէջ, ինչպիսին շունն ու գայլն են, կարող է այսպէս անասելի ատելութիւն գոյութիւն ունենալ: Նունը գայլի ետեից ընկերով՝ ամեն ինչ մոռանում է, սաստիկ կատաղում է և չի հանգստանում, միշտ որ իւր սովոր օձիքից չի բռնում: Նա ուշք չի դարձնում իւր վէրքերին, ոչ էլ իւր ընկերների մահին. սատկելիս անգամ աշխատում է պինդ խածաւել գայլին: Բայց բոլոր շներն իհարկէ այսպէս քաջասիրու շեն: Շատերը գայլից սարսափում են և փախչում: Հազւագէպ չէ, որ գիւղի մէջ անգամ այս կամ այն շունը հեալով ներս է ընկնում տուն՝ ապահով կրակի մօտ ապաստան գտնելու համար, և ապա դրսում երկար ժամանակ լաւում է գայլի ոռնոց:

Բ) Միւս ընտանի կենդանիներն էլ գիտեն գայլից պաշտպանւել: Նախիրներին սովորաբար չի համարձակուում մօտենալ գայլը, որովհետեւ եզն ու կովը և մանաւանդ գոմէշները վրայ են տալիս և եղջիւրներով ծակոտում են նրան: Մենակ մնացած հորթերի և նոյն իսկ եզան կամ կովի վրայ սակայն յարձակում է գայլը և կոկորդներից բռնելով՝

խեզգում է նրանց, Թոյլ ընտանի կենդանիները ամենքը կորած են, եթէ ժամանակին մի ապահով տեղում ապատան չգտնեն, ծաղկաթաւալը հալտում է նրանց առանց ուշը դարձնելու որևէ խոչընդոտի կամ արգելքի. նա բշում է նրանց ցեխի, մօրի ու ճաճճի և նոյն իսկ ջրի միջով, մինչեւ որ վերջոյ հասնում, բռնում է:

Դ) Զիերի ջոկերին զգուշութեամբ է մօտենում զայլը. նա աշխատում է մենակ մնացած քուռակներ քաշել, բայց յաճախ նոյն իսկ ջոկից հեռացած երիւարեների վրայ է թռչում, կամ կոկորդներից բռնում, խեզգում է: Նմոյզները, երբ նկատում են զայլին, սաստիկ անհանգիստ են լինում, իսկոյն վրայ են տալիս և եթէ զայլը չի նահանջում, առաջի ոտներով՝ սմբակակոխ են անում նրան: Յովտակները (որք ձիերը) նոյն իսկ տատամներով բռնում, կծոտում են նրան: Յաճախ ձիու սմբակի մի հարւածից արդին զայլը գետին է ընկնում. բայց երբեմն էլ նա մի արագ, ճարպիկ շարժումով ցատկում, բռնում է յարձակուզ ձիու կոկորդից և խեղդելով զետին կործանում նրան: Նոյն իսկ շատ զայլը միասին չեն կարողանում փախցնել ձիերի ջոկը. ընդհակառակն զայլերի իրենց բանը բռորդ է լինում, եթէ շուտ յիտ չեն դառնում:

Ե) Ծաղկաթաւալի բանը շատ յաջող չի լինում և այն ժամանակ, երբ հանգիպում է խոզերի եւամակի: Քաջասիրտ կենդանիներն իրար պաշտպանում են, և զայլը ստիպւած է լինում շուտով փախուստ տալ նրանց ժանիքների առաջից: Նոյն իսկ մենակ մնացած փառազը յաւ է համարում մարու չափ կուել զայլի հնու և սինպէս մեռնել, բան թէ փախչել: Աշխարներն են միայն, որ հնզ ու խոնարհ հոգւով, անձնաւէր սրտով ենթարկում են իրենց անխուսափելի ճակատագրին: Հենց որ զայլը յարմար բռուին զանում է, վրայ է տալիս հօտին և բռնում է տառ-

յին պատահած ընտիր խոյը կամ մամին. միւսները երկու երեր հարիւր քայլ հեռու են փախչում, իրար վրայ են խոնւռում և յիմար աչքերով յառած նայում են դէպի գայլը: Խելօք այծերն էլ չեն կարողանում այդ դէպքում օգնել ոչխարներին:

**10. ԳԱՅԼԻ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԵՐՆ ԵՒ ՑԱՏԿՈՒԹԻՒՆ-**  
**ՆԵՐԸ:— Ա)** Գայլն ունի նոյն ընդունակութիւններն և յատկութիւնները, ինչ որ շունը. միւսնոյն ոյժն ու տոկունութիւնը, նոյն սրամտութիւնն ու խելքը: Պստկուց մեծացրած զայլն ընտելանում է մարդուն, շան պէս ճանաշում, սիրում է իւր տէրերին և նոյն իսկ շան պաշտօն է կատարում: Բայց նա շատ աւելի անազնիւ է բան շունը, անկասկած միմիայն այն պատճառով, որ մարդս երկար դարերով չի կրթել նրան: Քանի զեռ բազց չի զգում, ծաղկակոխն աշխարհի ամենից վախկատ և վատասիրտ կենդանին է. այդ ժամանակ նա փախչում է ոչ միայն մարդկանցից. շներից, կովից ու նոխազից, այլ և ոչխարի հօտից, հենց որ աշխարները խմբւում են և գլուխները դէպի նրան են դարձնում: Ամեն բարձր ձայն, աղմուկ ու գոսոց և նոյն իսկ սօսափիւն ու օչնիոց, Շացին ու շառաչին սովորաբար քշում, փախցնում է նրան: Գուցէ այս է պատճառը, որ կենդանական վիպի մէջ ծաղկաթաւալը հանդէս է գալիս իրեն մի յիմար, տիմար, բանձրամիտ էակ, որ շարունակ խարւում է իւր եղբայր Պարոն Աղէսից: Սյս պատկիրը սակայն ամենին համապատասխան չէ իրուկանութեանը, խարէութեամբ, զգուշութեամբ ու խելքով. Նոյն իսկ երբեմն բառու է նրանից այս յատկութիւններով: Ընդհանրապէս վարդում է նաև հանգամանքներին յարմար, գործելուց առաջ բնենում է և զիտի նեղ զբութիւնից զուրս գալու յաջող թիր զանուիւն ՅՈՒՐԱՎՈՐԱՆ ՁԱՅՆԻ ԱՅՐԱՎՈՐԱՆ

Բ) Գայլի՝ զգայարանները նոյնպէս սուր և նուրբ են, ինչպէս շանը. Նրա հոտոտելիքը, լսելիքն ու տեսանելիքը շատ զարգացած են. Պնդում են, որ նա ոչ միայն լաւ ճանաշում է հետքերը, թէ որը՝ որ կենդանունն է, այլ և հեռւից լաւ հոտոտում է: Հաստատ է, որ նա շատ հեռւից լաւ լսում է թեթև տեսկեներն ու սօսավիւնները և հասկանում է, թէ ինչի ձայն է: Նրա խղճուկ վախկառութիւնը, խորամանկութիւնն և զգայարանների նրբութիւնը երեան են զալիս աւելի յանկարծական դէպքերի միջոցին: Այդ ժամանակ նա շափազանց զգոյշ և զգաստ է լինում վախենալով, որ մի գուցէ իւր կեանքը վտանգի ենթարկէ:

Գ) Ծաղկաթաւալին երբեք իւր դարանից դուրս չի ել-նում առանց վտան լինելու, թէ վտանդ չկայ: Ճանապարհին զգուշութեամբ խուսափում է ամեն մի շնչկոցից. կասկածով է վերաբերում ամեն չւանի, ամեն բացւածքի, ամեն անծանօթ առարկայի՝ կարծելով թէ զրանք որևէ ականատ կամ ծուլակ են իւր համար: Այս պատճառով խոյս է տալիս բաց դռնով ներս մտնելուց, եթէ կարող է շրջապատի վրայով ներս ցատկել: Կապւած կենդանիների վրայ նա մեծ կարօտութիւն ունեցած ժամանակն է: Միայն յարձակում. երեխ կարծում է, թէ իրեն խարելու համար զրւած խանձ են: Եթէ տեսնում է, թէ յետ դառնալու ճանապարհը գոցւած է, նոյն իսկ ոշխարի փարախ-ներում մի անկիւնում կուշ է զալիս. պազում՝ յաճախ առանց անասուններին վնասելու և անձկութեամբ սպասում է, թէ բանն ինչով կը փերջանայ: Ճիշտ նոյն կերպով վարւում է նաև իւր կեանքի ուրիշ անհանոյ հանգամանքներում, օրինակ՝ երբ ընկնում է որոզայթի համար պատրաստուած գուրի մէջ: Այդ ժամանակ նա ոչ թէ յօւստելու և լափելու համար է հոգում, այլ միմիայն իւր ազատութեան:

ՀԱՅԼԻ ԳՈՒԲԵՐԸ: — Ա) Միակ օգուտը, որ մար-

դիկ ստանում են գայլից, դա նրա մորթին է: Զմեռւայ մորթին մանաւանդ լաւ մուտքակ է լինում: Բացի մորթուց՝ տեղ տեղ կաշին էլ բանեցնում են ձեռնոց ու թըրմքուկի երես շինելու համար: Որպէս զի մորթին չփշանայ և աւելի արժէք ունենայ, աշխատում են զայլերին կենդանի բոնիլ: Դրա համար փորում են մօտ երեք մետր (մօտ չորս արշին) խորութեամբ և երկուս ու կէս մետր տրամագծով գուրեր, այսինքն փոսեր. երեսը ծածկում են թեթև, նկուն ճիւղերով, ծղօտներով, ցողունավ, յարդով, մամուռվ, խոտով և այլն, և մէջտեղում զնում են մի խանձ՝ գայլին հրապուրելու համար: Որպէս զի գայլը ժամանակ չունենայ առաջուց երկար հետազօտութիւններ անելու, շատ անգամ գուրը շրջապատում են ցանկապատով, որի վրայով նա պէտք է մի ստիւնով ցատկէ, որ աւարին համէ:

Բ) Սուաջ գալիս են տղուանները. Նրանց հետեւում է և գայլը: Բայց նա բաւական խելօր և զգոյշ է: իսկոյն չի վազում խանձի վրայ, որ գժրախտութեան մէջ ընկնի, եթէ գուրը ցանկով շրջապատած չի լինում, նստում է նըրա եզերքին: Թաթով շօշափում, տնտղում, քաշում է նրա ծածկը, կուչ ու ձիգ է անում, բայց չի մօտենում: Ագռաւնները կտցում են խանձը: Ծաղկաթաւալի փորը վեցվեց է անում, բերանի ջուրը գնում է: Եւ վերջապէս յանկարծ վճռում է համարձակ ոստիւնն անել և ընկնում է փոսը.

Մեր ծաղկաթաւալը փոսի մէջ շատ խորամանկ է շարժւում: Սկզբում սաստիկ կատաղում, ունում է, բայց յիտոյ խոհեմութիւն է համարում լուել: Երբ յաջուդ առաւտեան զալիս է գուրի տէր որսորդը, — նրա գալը գայլը հեռւից իմանում է, — զայլը բաշւում է փոսի մէջ մի անկիւն և պառկում, սատկուծ է ձեանում: Անուշագիր է թողնում վրան ձղած հողի կոշտերը, քարերը և այլն, և

միայն այն ժամանակ է սկսում նորէն կատաղել, կծոտել  
և ոռհալ, եթք ձոդի ծայրով պարանի օղակը վիզն են  
անց կացնում ու վեր քաշում:

12. ՊԱՏԱՀԱԾ ԴԵՊՔԵՐ ԴԱՅԼԻ ԿԵԱՆՔԻՑ. — Ա.) Մի  
գերմանացի խր պարտէզի ազարակում մի բանի գուր էր  
փորել որս անելու համար. Մի զիշեր երեք բոլորովին  
տարբեր օրս են ընկնում այդ փոսերից մէկը. Ամենից ա-  
ռաջ երեկոյեան մի պառաւ կին գալիս է ազարակը բողկ,  
սոխ, կոնդէզ տանելու և յանկարծ ընկնում է փոսի մէջ.  
յետոյ ընկնում է մի աղէս, և վերջը մի գայլ. Դրանցից  
ամէն մէկը միւսից գախենալով քաշում է փոսի մի քունջը  
և լուռ ու մունջ, անշարժ մնում է ամրող զիշերը. Մինչեւ  
անգամ դայլը, որ միւսներից գօրեղն էր, գախից ձայն չի  
հանում և չի յարձակում ոչ պառաւի և ոչ աղէսի վրայ.  
Միայն խեղճ պառաւը ահու շորանում է և գրեթէ կիսա-  
մեռ է գառնում. Առաւոտը վաղ ազարակի տէրն ըստ սո-  
փորութեան գալիս է գուրերը զիտելու և ապշած է մնում  
տեսնելով այս զարմանալի որսերը. Նա սիրտ է տալիս  
պառաւ կնոջը, որ չվախենայ, և իսկոյն իբրև քաջ տղա-  
մարդ, ցատկում է փոսի մէջ, սպանում գայլին ու աղէ-  
սին և կիսամեռ պառաւին գրկած հանում է փոսից մի  
սանդուխով.

Բ.) Մի գիւղացի մի ամառ զարմանքով տեսնում է,  
որ մի գայլ հանդարտ նստած է այն գուրերից մէկի մէջ,  
որ նա ձմեռը փորել էր գայլ բռնելու համար. Առանց ո-  
րիշ զէնքի, ձեռին ունեցած մի մահակով միայն փորձում  
է սպանել գայլին, բայց այդ ժամանակ հաւասարակշռու-  
թինը կորցնելով զլորւում է փոսի մէջ և ձեռների. ու  
ոտների վրայ ընկնում. Գիւղացին դեռ չէր ուղղւել, որ  
Ծաղկաթաւալն իսկոյն օգտուում է պատեհ առթից ոչ թէ  
նրան կոկորդից բռնելու և խեղճելու համար, այլ ցատկում

է նրա մէջքի վրայ և այնտեղից դուրս է թռչում, ազատ-  
ւում իւր բանտարկութիւնից. Գիւղացին մնում է փոսի մէջ  
և երկար շարշարւելուց յետոյ, մհծ գժւարութեամբ և  
միայն ձեռին ունեցած մահակի օգնութեամբ հազիւ հազ  
կարողանում է դուրս ելնել գուրից:

Գ.) Մի շոգ կէսօրի Աստապատ գիւղի մօտ երասխ  
գետի մէջ գոմէշները նստած լողանում էին, հազիւ գլուխ-  
ներն էին երեսում. Տօրակէզ հօտաղները քաշւած մի ըստ-  
ւերի մէջ անհոգ հանգստանում էին. Այդ ժամանակ որտե-  
ղից որտեղ մօտենում է մի գայլ. Ուրիշ անգամ նա չէր  
յանդնիլ իհարկէ յարձակւել գոմէշների վրայ, քանի որ  
այդ յաղթանդամ և հզօր կենդանիները քաջութեամբ  
պաշտպանել գիտեն. վագրի պէս վրայ են տալիս և գայ-  
լին եղչերահար ու ոտնահար անում. Բայց այդ օրը Ծաղ-  
կաթաւալն երեկի քաղցից շատ էր տանջւած, որ ըոսէն  
յարմար համարեց. Կարծելով թէ կը յաղթէ զրի մէջ հան-  
գիստ նստած գոմէշներին, նա էլ չի համրերում, իսկոյն  
հասնում, իրեն ձգում է գոմէշներից մէկի մէջքի վրայ. և  
երբ գոմէշը վիզը հանում է զրից, բոլոր ուժով իւր ատամ-  
ները խրում է գոմէշի վիզը. Տեղից վեր է թռչում գոմէշն  
և սկսում է վագել ուղղակի գէպի գիւղը. Դայլը փորձան-  
ըի մէջ է ընկնում, որովհետեւ ատամները մտնում են գո-  
մէշի վիզը, փակւում, մնում են և ինչքան զօրում է, չի  
կարողանում հանել. Գիւղացիք զարմացած տեսնում են,  
որ օրը կէսօրին գոմէշը վագելով մտնում է գիւղը, մի  
գայլ էլ մէջքին հստած. Հաւաքւում են մարդիկ ու ջար-  
դում, սպանում են համարձակ ծաղկաթաւալին.

## Բ. ՄԱՍ

### ԳԱՅԼԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

#### 1. ԳԱՅԼԻ ԶԱԴՔ

Ժագող արեգակի ճառագայթներն ոսկեզօծել էին լիռների գաղաթները, երբ հովիւները հօտերն առօտ հանեցին։ Մի էզ գայլ իւր ձագի հետ նստեց մի ժայռի ետեսմ, յարմար տեղում և սկսեց աշքերը յառած մտիկ տալ գէպի ոչխարը, որ արածում էր խոտաւէտ լիռան լանջին։ Նա յոյս ունէր, թէ հօտը կը գայ. կը մօտենայ, մէկը կը յափշտակի, կուտեն. Զագն սկսեց վազվզել, թաւալ տալ մարգարտանման ցօլով ծածկւած խոտերի մէջ, ծաղիկները կոխոտել, ինքն իրեն խաղալ, զրօսանք առնել։ Ապա վեր կացաւ, նայեց գէպի ոչխարն և բացականչեց։

— Այ հայ, ինչրան շատ են։ Քանիսը կը լինին, մայրիկ. մի հարիւր, հարիւր յիսուն հատ կը լինին։

— Ի՞նչ հարիւր, հարիւր յիսուն. հազար, երկք հազար կը լինին, — պատասխանեց մայրը։

— Վա, նրանց մայրը տարէնը քանիսն է բերում, որ այդքան շատացել են, — հարցրեց ձագն իւր մօրը։

— Մէկը կամ երկուօր, — պատասխանեց մայրը։

— Հապա զու որրան ես բերում։

— Եօթ ութ հատ բերում եմ։

Որ այդքան բերում ես, բա մոր են իմ եղբայրներն ու քոյլերը, — հարցրեց ձագը։

— Արդի, նրանք սուրբ են, շատանում, հօտ են կազմում, իսկ մենք անսուրբ ենք, չնոք բազմանում. Վախենում եմ քեզանից էլ մի օգուտ շտեսնեմ։

Մինչդեռ մայր ու տղայ այսպէս խօսում, զրոյց էին անում, հօտն արածելով սկսեց հեռանալ. Մայրն իւր ձագը

թողեց այնտեղ, իսկ ինըը գնաց ոչխարի ետեսից։

#### 2. ԳԱՅԼԻ ՈՒՍՈՒՄԾՔ

Եկան, գայլի ձագը բռնեցին ու տարան, գիրքն առաջը դրին, թէ կարդայ, ուսում առնէ։ Ասացին. «Ասայը»։ Ասաց. «Այծ, այծի ճրագուն փորի գեղ է»։

Ասացին. «Ասա բեն»։ Ասաց. «Բադ էլ կը բռնեմ, թէ իմանամ որտեղ է»։

Ասացին. «Ասա գիմ»։ Ասաց. «Գառը, գիտեմ, շատ անմեղ է, նրանից չկայ երկիւղ»։

Ասացին. «Ասա դայ»։ Ասաց. «Դմակ, ախ, դմակ, անոյշ իմ իւղ»։

Ասացին «Ասա եշ»։ Ասաց. «Ես ու եղ, եզը մի քիչ զօրեղ է, բայց նրա միսն էլ համեղ է»։

Ասացին. «Ասա զայ»։ Ասաց. «Զարենմ, զենեմ, մարթեմ, քերթեմ անխնայ, պատռեմ, լափեմ ու պպեմ տամ զուզայ»։

Ասացին. «Ասա է»։ Ասաց. «Էշն էլ գէշ չէ, և էշի հետ բանը հեշտ է, բան գոմէշի»։

Ասացին. «Ասա ըթ»։ Ասաց. «Ծ՝, ընտանի կենդանի, — ամենն է օգտաւէտ ու պիտանի. և ուզտ, և ձի, և ջորի. հորթ ու կովը ճանապարհը մոլորի, գայ իմ ճանկն ընկնի, ախ, ինչպէս լաւ կը լինի»։

Ասացին. «Ասա թոյ»։ Ասաց. «Թօ-թօ, մոռացել եմ ոչխարը. թող մի պատահի, տես ոնց կը հանեմ լուրզն ու միսը»։

Հենց որ ասացին. «Ասա ժէ», տեղից վեր թռաւ, թէ «ժամանակ չունիմ, շնուտ արա, հէր օրնած. ոչխարի հօտը հրէն սարովն անցնում է. իմ ի՞նչ բանն է այր-ժէ ճէ—ոայ, ես հօ քաղցած մեռայ»։

### Յ. ԳԵՅԼԻ ՊԱՐԾԱՆՔԸ

Ման եկաւ, ման եկաւ մեր ծաղկաթաւալը՝ մտքում «այծ» ասելով և եկաւ իրօն մի այծ գտաւ։ Այծն առօրփառօր բազմել էր մի բարձր տանիքի պատի վրայ ինչպէս մի անառիկ բերդի մէջ։ Գայլն էլ եկաւ, նստեց ներքեւում։ Նա շէր կարող բարձրանալ վեր, ուստի ուզեց խորամանկութեամբ խարիլ այծին և ասաց. «Ողջոյն բեզ, նոխազ, այծերի թագաւոր. ինչի ես բազմել այդրան բարձր գահի վրայ փառաւոր։ Մարդ այդրան էլ հպարտ կը լինի. մի փոքր էլ խոնարհ եղիր, ցած արի վերնաշյարկիցդ։» Այծը յոխուրախով պատասխանեց. «Ինչու վէր գամ, որ եղջիւրներովս փորդ պատռեմ։ Գայլը վիրաւորւեց այծի այս յանդուդն խօսքից և մտածեց. «Ես գայլ գաղան լինիմ, հօրենական արհեստով մսագործ լինիմ, իմ պաշտօնը լինի մորթել, քերթել, պատառել, և այժմ այս անգէտ այծն ինձ այսպէս անպատճեց։ Էլ շամբերեց ծաղկաթաւալն և ասաց. «Ախ. երանի թէ իջնէր իմ այծիկը, թէկուզ փորս իր կոտուով պատռէր։ Թող զի վէր գար իմ այծիկը. այն ժամանակ կը տեսնէինք, թէ ով ում փորը կը թափէր։» «Գնա. գնա խարերայ գայլ։» ասաց այծը մօրուքը տրմբարմբացնելով. «Իմացայ միտրդ։ Գնա, հեռացիր. թէ չէ հրէս պահապաններս դալիս են։ Գիտես. լսել ես հօ գայլիսեղդ շները։»

Գայլը յիտ նայեց և տեսաւ, որ շներն իսկապէս զալիս են. Խեղճը յոգուց հանելով հեռացաւ անյապաղ։

### 4. ԳԱՅԼԻ ԴԱՏԱՐԱՐ

ծաղկաթաւալն զրօսնում էր կահաչով գարդարւած սարերում, երբ հանդիպեց երկու խումբ գայլի ոշխարի. Խմկոյն ամեն մը խմբից բաժանեցին մի մի մեծ, զօրեղ

խոյ և նրան ընդառաջ գալով ասացին. «Ո՞վ ծաղկաթաւալ. մենք մեր արօտատեղի պատճառով յարաեն կուի մէջ ենք միմիանց հետ։ Լսել ենք, որ զու հօթը տարի ուսում ես առել, եօթը տարի էլ ճգնութիւն ես արել, արդար դստաստան կանես. Յատուկի խընդրում ենք, որ մեզ մի սահման կտրես, և այսուհետե ամեն մէկս միւսի իրաւունքը յարգինք, մեր բաժնում արածենք և էլ չկուենք մէկ մէկու հետ։ Դրա համար իւրաքանչիւրս մեր հօտից մի մի ուոզ կը տանք քեզ վարձ։»

Գայլն ուրախութեամբ յանձն առաւ, ագին կախ ձըգեց ու սկսեց հողն ազիով գծել նշան անելու համար։ Մինչդեռ նա զրանով էր զբաղւած, յանկարծակի խոյերից մէկը մի կողմից, միւսը մէկ էլ կողմից հարու տւին իրենց եղջիւրներով նրա կողքերին և բիշ էր մնում. որ փորը պատռեն։

### 5. ԳԱՅԼԻ ՓՈՂԱՀԱՐ

Յաջորդ օրը գայլը կէս գիշերին մտաւ մի փարախ, մի գառ բռնեց. Գառը լալով ընկաւ նրա ոտներն և ասաց. «Ո՞վ զայլ, թէ այտ և ես ոչ մի յանցանք չունիմ, բայց գիտեմ, գու պիտի ինձ ուտես. Աստած ինձ քեզ է պարզեել։ Միայն մի խոնարհ խնդիրը ունիմ, կատարիր, յետոյ ուտում ես՝ կեր. ես իմ մօրից լսել եմ, թէ ձեր ցեղը բաղցը նւազել գիտէ, զու էլ քաջ փուրիաւ ես և յաջողակ էլ ձայն ունիս. Վաղուց փափակում էի, որ քո երգը լսեմ. Ի՞նչ կը լինի, շարհամարհես իմ խնդիրը, զոնէ մի անգամ փողդ փշես, ես լսեմ ու կարօտ շմեռնեմ։»

Գայլը մտածեց. թէ գառն ինչ է, որ իւր ճանկից պըծնի. գոխանակ իսկայն յօշտերու և պատառելու նրան,

ուղեց նախ իւր շնորհքը ցոյց տալ: Կկզեց յեաի ոտների վրայ, երկու թաթը զըեց զնշին ու սկսեց կոկորդովը մին ունալ: Եւ անա շները զարթնեցին ու շրջապատեցին նըրան նա գառն էլ մոռացաւ, իր երգն էլ և հաղիւ առատւեց ու փախաւ լեռան գլուխը:

### 6. ԳԱՅԼ ՊԱՅՏԱՐ.

Ա) Գայլն արագ փախչելով դուրս եկաւ մի ծաղկաւ մարդագետին: Տեսու մի գէք էշ կանաչ սէզերի մէջ կապած՝ արածում էր նա մտածեց. «Իմաստուններն ասել են, թէ օձի գլուխր որ ցաւի, ճանապարհի մէջտեղում կը պառկի. Հիմա այս էշինն է»: Աւանակը՝ խոնարհութեամբ գլուխ տալով՝ ասաց գայլին. «Գոհանամ Արարիշ Աստծուց, որ քեզ ինձ մօտ բերեց, յարգելի եղբայր, Խնդրում եմ, որ ինձ ուտիս և ազատիս այս անցաւոր կեանքից»: Ծաղկաթաւալն ուրախութիւնից ինքն իրեն կորցրեց, որ բանն այդպէս հեշտութեամբ է պրծնում: Էշը շարունակեց. «Աշխարհում ես մի օր չտեսայ, դառն աղէսներից աշք բաց չարի. Մի տարի կայ՝ բեւուր մտել է յետի ոտս, տանջում է ինձ: Ոչ մեռնում եմ, ոչ էլ բաւանում: Ազաշում եմ քեզ, ովք եղբայր, բարի եղիք, կեր ինձ. զգւել եմ կեանքից. Միայն հոգուդ վարձ լինի, մի լաւութիւն արա, գթա ինձ, նախ և առաջ բեւուր ոտիցս հանիք, որ մի սիրտս հովանայ, և ապա նոր կեր, քեզ հալալ լինի: Ես ինքս իմ յօժար կամքով ուզում եմ միռնել»:

Բ) Գայլը հաւատաց էշին, անցաւ էշի ետեր, որ մեխը բաշէր, բայց երկարականչը բոլոր գորսութեամբ այնպէս մի արացի տւաւ նրա ծնօտին. որ ատամները շարդւեցին: «Դսա, գնա»), ասաց աւանակը. «Թէ որ ինձ

մոխրաթաւալ էշ են ասում, քեզ էլ ծաղկաթաւալ էշ են ասում: Որտեղ բոնը պատմես, իմն էլ այնտեղ ասա»:

Գայլը փախաւ գառնապէս լաց լինելով և արտօւալից ոչքերով նստեց մի բլրի վրայ ու սկսեց ինքն իրեն յանդիմանել ու ասել. «Այ անխելը, խենք ու խելառ, հապա գու երբ պիտի խրատւես, խելօքանաս: Տեղն է, ինչ աղէտ ու փորձանք գլխիդ գալիս է: Դու շգիտես, որ աշխարհս յեղափոխել է. սէրբ, բարեկամութիւնը մէջտեղից վերացել է. արած լաւութեան գէմ վատութիւն են անում: Դու իսկզբանեւ անի տնով տեղով մսագործես ու մսագործի որդի. ասա՝ քեզ ովք գարձրեց նալրանդ, որ էշի ոտից բենուր հանիս և գլխիդ այս փորձանքը գայ: Հիմա Երբ պիտի լաւանայ բերանիդ վէրը»:

### ԳԱՅԼ ԶՐԱԴԱՑՈՒՄ

Ա) Գայլն զգուշութեամբ, սէկպ-սէկպ շուրջը նայելով իջաւ ձորը, որտեղից հոսում էր գետակը վորքիկ ջրվւծներ և ջրնկեցներ կապմելով: Մի քիչ որ առաջցաւ, տեսաւ, որ այնտեղ մի ջրաղաց կար, գուռը բաց էր. մի կատու էլ զռանը նստած՝ գունչը սրբում էր թաթիկներով, լւացւում էր. «Գէք այս կատուին բռնէի», մտածեց նա և փորը գետնին բռելով՝ զողի պէս ետերից սկսեց մօտենալ կատուին: Բայց Փիսիկը շատ րզգոյշ էր: Հենց այն է՝ գայլը յոյս ունէր, թէ պէտք է մի ոստիւն անէր և նրան բռնէր, մեր Փիսիկը փախաւ, մտաւ ջրաղացը: Գայլը շփոթւեց ինքն էլ հետեւց կատուին, մտաւ ներս: Բայց անշնորհը շարժւեց, մտնելիս դիպաւ զռանը, գուռը փակւեց վրան: Կատուն զռան սողնակից զուրս եկաւ, զնաց, իսկ գայլը մնաց ներսում:

Բ) Սուացին բռպէին ծաղկաթաւալն ապշած մնաց:

նրա աշքերը մթնեցին. բան չէր տեսնում. Դրառում օդք պայծառ էր, իսկ ներսում մութն էր ու խաւար. Մի փորբիկ երդից հազիւ մի աղօտ լոյսի շողք էր ընկել. Բացի այդ՝ ջրաղացի յատակը կարծես դողդողում. օրօրուում էր և ներքի յարկից ու ամեն կողմից խուլ որոտմունք էր լըսում. Կամաց կամաց նրա աշքերը վարժւեցին, նայեց շուրջը, տեսաւ երեք վէմ քարեր կարգով շարւած պտըռում էին ահեղ գրգոցով, դղրդեցնելով ամրող շինքը՝ նա բոլոր մարմնով սարսուաց ու յետ քաշւեց:

Գ) Մենակ էր գայլը ջրաղացում. Դէս ընկաւ, դէն ընկաւ, դուրս կալու տեղ չգտաւ. Վերջը յուսակսւը սկաւորի պէս նստեց մի մութ անկիւնում յատակի վրայ. Պարապ ժամանակ շատ ունէր, սկսեց ինքն իրեն հաշիւ տալ իւր զլիսին եկած դէպքերի մասին. «Այ յիմար», ասաց նա ինքն իրեն յանդիմանելով. «Դու հօ խայտառակ եղար աշխարքի միջին. Ո՞վ էր քո ազգի մէջ երդիշ կամ փողահար եղել, որ դու քո ոռնոցով նւազահանդէս յօրինեցիր ու շներին զարթնեցրիր. Այ անխելք, դու երբ ուսում առար, կրթւեցիր և կամ որտեղ դատաւորութիւն սովորեցիր; որ վայրի ոչխարներին սահման էիր կտրում: Յիւալի որ ապուշ ես, թէ չէ՝ այն աւանակ էջն անգամ քեզ աքացի չէր ուտեցնիլ. Դրանով չխրատւեցիր, չփորձւեցիր, կատւի հետ մտար ջրաղացն ու դուռը փակւեց վրէդ. Ո՞րտեղից պէտք է դուրս գաս. Հիմա որ ջրաղացպանը գայ, պոշիցդ բոնի, այնքան ձգձգի, որ պոշդ ձեռին մնայ, արժան չէ քեզ:

Դ) Դալի խօսքը դեռ բերանին էր, որ ալրաթաթախ ջաղացպանը ներս մտաւ, դուռը յետ դրեց, տեսաւ գայլը անկիւնում պազած. Առաւ ջրաղացի նիգն ու ընկաւ գայլի կողքերին, տուր թէ կը տաս, մի լաւ ջրդեց. Դայլն ազատւելու ուրիշ միջոց չգտաւ, զլուխը կախեց ջրաղացի

ջրածակը, որ փախչի. Բայց ջաղացպանը հասաւ, պոչիցը բռնեց. Ջաղացպանը մի կողմից, գայլը միւս կողմից ձիգ տւեցին, մինչև որ գայլը զօրեց, պոշը հանեց ջաղացպանի ձեռից, ընկաւ ջրտունը և այնտեղից դուրս եկաւ. Սագերը խումբ-խումբ լողանում էին ջրաղացի առւի մէջ և եղերքին արածում, որդեր էին որոնում. Յանկարծ որ տեսան գայլը դուրս եկաւ, ահազին ճիշ, աղաղակ բարձրացրին, թները թափահարեցին ու թռչկոտեցին դէս ու դէն. «Ճօ, տօ, սրանք շնեցից էլ վատրար են եղել. Դընամ, հեռանամ շուտ, թէ չէ հիմա ջաղացպանը դուրս կը գայ», — ասաց գայլը, բայց և այնպէս հասաւ, մի սագ ճանկեց ու փախաւ:

#### 8. ԳԱՅԼԻ ՓԱՌՏԱԲԱՆ

Ծաղկաթաւան ուրախ-ուրախ բարձրացաւ դէպի լեռան գագաթը. Երդէն շոգ էր. Տեսաւ՝ հօտից մոլորւած մի անմեղ գառնուկ հասաւ մի սառն աղբիւրի ջրի, որ յորդառաւ բղխում էր ապառածից, և առւակի ներքեռում կանգնած՝ սկսեց խմել. Մեր քաղցած ծաղկաթաւանն էլ եկաւ, կանգնեց աղբիւրի զլիսին և ուզեց խեղճ գառնուկին ուտել. Բայց նա կամեցաւ օրէնքով վարել և նախ գառանը մեղաւոր հանել, որպէս զի չասեն թէ գառն արգար էր և անօրէն գայլը նրան կերաւ. Դարձաւ, ասաց հայհոյելով.

— Այ անպիտան, ինչ իրաւունքով և որ օրէնքով համարձակուում ես դու իմ յստակ չուրը պղտորել քո պիղծ, ադտու բերանով՝ հազար տեսակ ցեխ, աղք ու կեղտ լցնելով մէջը. Դու չգիտես, որ ես այս սարերի ու ջրերի աէրն եմ, Մաղկակոխ իշխանը:

— Գիտեմ, տէր իմ. բայց իս ինչպէս կարող եմ Ք

զուրբ պղտորել, քանի որ աղբիւրի զլխին դու ես կանգնած, իսկ ես ներքեռում եմ».

— Եսիր, ի՞րք անզգամ, դու դեռ յանդգնում ես խօսեմ: Դու չէիր, որ անցեալ տարի ինձ խարեցիր և երգել առիր, ես չեմ մոռացել. լաւ եմ լիշում բո յանցանք, — ասաց գայլը մի նոր սուտ յերիւրելով:

— Քեզ մատաղ, ես դեռ մի տարեկան չկամ:

— Զբուդ կտիր, փուշ կենդանի: Դու չէիր, բո եղբայրըն էր կամ բո հօրեղբօր որդին: Ինձ համար ողջը մէկ է. ես էն ու վրէժս պիտի հանեմ ձեզնից. դուք իմ թշնամին էք յաւիտենական: — Ասաց գայլը և կարծելով, թէ արդէն հաստատեց գառան յանցանքը, հանդիստ խզով յօշուեց, լափեց նրան:

### 9. ԳՈՅԼԻ ԶՂՋՈՒՄԸ

Ա) Գարունն անցաւ, եկան յունիս ու յուլիս ամիսները, և վերջապէս Ծաղկաթաւալի թշւառ վիճակը կամաց պարունակութանքում էին քնում. Մեր որսորդի բանը յաջող էր, որսը առատ, փորը յագեցած: Այլ ես առաջւայ սակառապէս կեանը չէր վարում: Նրա ճաշը հիմա ճոխ էր: Օր չէր անցնում, որ մի զէր ու պարագա որս չճանկէր:

Մէկ օր էլ նա կուշտ ու կուռ կերել էր և բարձր լեռնան զլխին, իւր որջի առաջին, յդիացած պառկել էր: Յօրանչեց, յօրանչեց և ապա կէսօրւայ բունը թօթափերվ՝ սկսեց իրեն միտք անել: Յիշեց իւր մօտիկ անրվանքները, և նրա աշըքի առաջին շարւեցին մէկ մէկ այն զոցեալը, և նրա աշըքի առաջին շարւեցին մէկ մէկ այն զոցեալը, որոնց արիւնը թափել էր նա վերջին ժամանակները:

Բ) «Մայիսին Վարդանի գառը լափեցի», — մտածեց նա. «յունիսին այն որրեսայլի, աղքատ Մարօն երկու ոշ-

խարը խեղդեցի. այն խեղճը մինչև այժմ էլ գեռ նրանց համար անդադար սուր ու լաց է անում: Նոյն զիշերը մօտեցայ ցորենի զէզին, — Յովսէփի եղներն այնտեղ էին, — մէկի փորը պատուեցի: Հետևեալ օրը Պօղոսի հորթը կորիլ էր, ինձ անուշ պատառ եղաւ, ել չեմ ասում Կարօն ոչխարը, որ մտել էր մացառերի մէջ. Յովակիմինց ջորին: Հա, թիշ մնաց, որ մոռանալի Մատթէոսի էշը, Գարբիէլ և Միքայէլ եղբայրների այժմ: Մի ժամանակ կար. որ օրական պարէնի կարօտ էի. մի ստուկած լէշի որ հանգիւ պէի, կուրախանայի: Հիմա փառք Աստծոյ, տար տաք արին եմ խմում. Պա, պա, պա, հապա այն ինչ օր էր, որ մտայ Թագէսսի փոտրախը, բանի ոչխար խեղդեցի մի անգամից... Պայ ինձ, այս ինչ արիւնարբու հրէշ եմ եղել ես. այս ինչքան մեղքեր ու յանցանքներ են բարգւել վըզիս: Ես ինչպէս պէտք է այսքան մեղքի տակից գուրս գամ: Գրիգորի տղայ նիկողայոսի անէծը միայն իմ աշգերը կրոնի, ես նրա շէն տունը մի անդամից բանդեցի»:

Գ) Եյս բոլոր յիշողութիւններից ծաղկաթաւալի խիղճը սկսեց տանջել, թէ ինչու այսքան շարութիւն է անում, Աստծոյ ճանապարհից դուրս գալիս: Եւ մինչզեռնա մեղայ էր գալիս, յանկարծ լսեց մի թոյլ սօսափիւն, վեր թրուաւ տեղից, — ուրիշ անդամ լինէր, նա թնդանօթի ձայնից էլ այնպէս չէր սարսափիլ, ինչպէս այսօր այն թեթև խօփինից, — նայեց շուրջը, տեսաւ բան չկայ և գարձեալ շարունակեց խորեգածել: «Վայ, վայ, ինձ նման քաջ ու յանդուկն որսորդն այսպէս վախկոտ գառնայ: Հիմա թիշ մնայ, որ մի հեղ, յիմար, երկյոս, անզէն ու անօգնական կենդանուց էլ վախենամ: Իմ բազում մեղքիցը չէ այս, բա ինչ է, 2է, ես պէտք է գնամ երուսաղէմ, խունկ ու ձէթ նւէր տանեմ, պատարագ անել տամ, մահտեսի ու գառնամ, մեղքերս բաւեմ. ապա թէ ոչ՝ էլ ինձ փրկուգառնամ»:

թեան յոյս չկայ»։ Այսպէս մտածեց գայլը և արագընթաց քայլելով ճանապարհ ընկաւ դէպի Սուրբ Քաղաքը։

Կ) Հովիները հօտերը մակարել էին մի ձօրի մէջ, ժայռի տակ ստւերում։ Իրենք էլ թեք էին ընկել մի յորդ աղբիւրի վրայ, որ խոխոչալով բղխում էր այն ժայռի տակից։ Արթուն շները հսկում էին։ Ծաղկաթաւալի այդ ժամանակ երուսաղէմ էր գնում։ Գնաց, գնաց, քաղցածացաւ։ Պատահեց նրան մի ոչխար, որ հօտից բաժանւել, հեռացել էր։ Ոչխարը գայլին որ տեսաւ, բոլոր մարմնով սկսեց գողգողակ եղէզնի պէս։ Գայլը խոնարհութեամբ ողջունեց նրան և ասաց։

— Մի վախենար, մաքի քուրիկ, ուխտ եմ արել, որ այլս գայլութիւն չանեմ։

— Որ ալդպէս է, Աստւած քո բանը յաջողի, գէլ աղբէր, ուր ես գնում։

— Ինձ էլ գէլ մի ասիլ, մուխսի ասա. գնում եմ երուսաղէմ։

— Բարով գնաս, բարով գաս, մուխսի աղբէր։

— Բայց ես անօթի եմ, — ասաց գայլը ոչխարին, — չի լինիլ, որ մի քիչ քո այդ դմակից տաս, ուտեմ. քեզ համար էլ աղօթք կանեմ։

— Ինչի չէ, մահտեսի. բա իմ հոգուն վարձք չպիտի։ Կաց, ջուրը մտնեմ, լւանամ, նոր գամ, տամ կեր։ Մէկ էլ խնդրում եմ, — այստեղ շող է, դմակս կորդնի, — զու գնա այն բարձր ժայռի տակը, ես կը լողանամ, կը գամ. կը տամ կեր ու գնա։

Ոչխարն իրեն ձգեց ջուրը, իսկ գայլն գնաց դէպի ժայռի հովը, ուր պառկած էին զամփու շները։ Սրանք երբ որ գայլին տեսան, ընկան ետեղ, հալածեցին նրան։

Ե) Մեր ծաղկաթաւալն լիռան բարձրաւանդակներից մի փոքր ներքեւ իշաւ, տեսաւ, որ մի քանի օրավար տեղ

արդէն ներկած էին, բայց դեռ մի տեղ եօթը զոյգ գոմէշ լծած գութանին՝ վար էին անում. մի ուրիշ տեղ էլ արօրով էին գետինը հերկում. Այդ ժամանակ վար անողների համար հաց բերին. Դուժան, արօր արձակեցին և մաճկալ ու հօտաղ ժողովւեցին, որ ճաշեն, Տաւարը ցըրւեց։ Արօրի եղներից մէկը բաւական հսուացաւ, անցաւ դարի միւս երեսը և յոգնութիւնից նստեց. Գայլը մօտեցաւ նրան և ասաց.

— Բարի աջնդում քեզ, եզ եղբայր, ինձնից մի վախենար. զոջացել եմ, գնում եմ երուսաղէմ ուխտ. էլ գայլութիւն չպիտի անեմ։

— Որ այդպէս է, Աստւած քո բանը յաջողի, գնա։ Ընդունելի ուխտ լինի։

— Բայց, եզ եղբայր, ես խիստ անօթի եմ. չի լինիլ, որ մի քիչ այդ գէր աղդըք մսիցը տաս, որ ուտեմ. Քո հոգու համար էլ աղօթք կանեմ, ժամ-պատարագ անել կը տամ Վարդպավառին։

— Ինչի չէ. արի մէջըս մի քիչ բորիր, յետոյ տամ, կեր, Գայլը մօտեցաւ, ատամները ձգեց եղան մէջքին, ատամները մտան մէջը, էլ դուրս չեկան. Եզը պառկած տեղից թռաւ, գայլը մնաց մէջքին. Եզն առաւ նրան և ցելի ակօսների միջով ուղղակի գութանաւորի մօտ տարաւ. Ոսր քար առաւ, որը՝ փայտ, որը գօտին հանեց, որը՝ սամին ու տին գայլին թէ կը տաս։

Զ) Ծաղկաթաւալը բարձրաւանդակներից իշաւ գաշտը, ուր արդէն շոգ էր և հանդիպեց հնձւորների, որոնք ցորեն էին հնձում, խուրձ կապում, բարդ բարդում, կամ դէղ զնում. Նրանցից օգուտ չկար. բերանը զօղած փայլուն մանզագները ձեռներին էր. Բայց մի քիչ որ հեռացաւ, տեսաւ, որ մի ձի արածում է։ Ասաց. «Ճի եղբայր, ես երուսաղէմ ուխտ եմ գնում, անօթի եմ, ինդքեմ մի քիչ

